Մամլո հաղորդագրություն
ԱՄՀ-ի աշխատակազմի թիմի այցը Հայաստան

Հունիս 17, 2008 թ.

2008 թ. հունիսի 11-ից 17-ը ԱՄՀ-ի աշխատակազմի թիմը գտնվում էր Երևանում, վերջին տնտեսական զարգացումների դիտարկման և նոր կառավարության հետ մակրոտնտեսական քաղաքականությունների և կառուցվածքային բարեփոխումների գծով առաջնահերթությունների քննարկման համար: Քննարկումները հիմքեր ստեղծեցին ԱՄՀ-ի օժանդակությամբ իրականացվելիք նոր ծրագրի շուրջ սեպտեմբերին բանակցություններ վարելու համար: Աշխատակազմի թիմը գոհունակությամբ արձանագրում է տնտեսական բարեփոխումների իրականցման հարցում կառավարության վճռականությունը, մասնավորապես հարկային քաղաքականության և մաքսային վարչարարության բարելավմանն ուղղված քայլերը: Բարեփոխումների նկատմամբ վստահություն ապահովելու համար կարևորվելու է բարեփոխումների նախաձեռնությունների ամբողջական և անհապաղ իրականացումը:

Մակրոտնտեսական ցուցանիշներ և հեռանկարներ

Հայաստանում, ըստ երևույթին, կպահպանվի իրական ՀՆԱ-ի աճի՝ նախորդ տարիներին ձևավորված երկնիշ տեմպը: 2008 թ. առաջին 4 ամիսներին ՀՆԱ-ի աճը կազմել է 9.3 տոկոս և այն կշարունակվի շինարարության ոլորտի ներկայիս աճի շնորհիվ: Բարձր աճը հանգեցրել է ներմուծման նկատմամբ պահանջարկի ավելացման, որի արդյունքում զգալիորեն վատթարացել է ընթացիկ հաշվի պակասուրդը և նվազել են արժևորման ճնշումները: Դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ 2007 թ. դեկտեմբերից հետո հիմնականում կայուն է եղել:

Միջազգային զարգացումների հետևանքով՝ վերջին ամիսներին Հայաստանում զգալիորեն ավելացել է սպառողական գների ինդեքսով հաշվարկվող գնաճը: Սակայն այն դեռևս ավելի ցածր է, քան հարևան երկրներում՝ դրամավարկային քաղաքականության աստիճանական խստացման և շրջահայաց հարկաբյուջետային քաղաքականության շնորհիվ: Թեպետ 10 տոկոսի հասնող կտրուկ գնաճի հիմնական պատճառը սննդամթերքի բարձր ներմուծման գներն են, ոչ պարենային ապրանքների գծով ևս աճ է արձանագրվել՝ արտացոլելով նավթամթերքի միջազգային գների բարձրացումը և աճող ներքին պահանջարկը:

Առաջարկի գծով արտաքին ցնցումների բացակայության պարագայում՝ 12-ամսվա կտրվածքով գնաճը ակնկալվում է, որ մինչև տարեվերջ կնվազի և դեկտեմբերին կկազմի շուրջ 7 տոկոս:

Հարկաբյուջետային զարգացումները դրական էին, հիմնականում հարկային եկամուտների՝ հատկապես ԱԱՀ-ի մասով, հավաքագրման բարձր ցուցանիշների շնորհիվ: Սպասվածից բարձր հարկային եկամուտների տնտեսման դեպքում 2008 թ. հարկաբյուջետային պակասուրդը կարող է նախատեսվածից զգալիորեն փոքր լինել, ինչը հարկաբյուջետային քաղաքականությանը հնարավորություն կտա օժանդակել դրամավարկային քաղաքականությանը գնաճային ճնշումները մեղմելու հարցում:

Քաղաքականության քննարկումներ

Գնաճի վերահսկում. անհրաժեշտ է խստացնել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը

Հավանական է, որ ներմուծվող էներգակիրների և սննդամթերքի գների աճի, կենսաթոշակների և աշխատավարձերի իրականացված և ծրագրավորված բարձրացումների և վարկերի արագ աճի պայմաններում գնաճային ճնշումների բարձր մակարդակը կպահպանվի: Այդպիսի պայմաններում դրամավարկային քաղաքականության մարտահրավերը կայանում է սննդամթերքի և էներգակիրների երկրորդ փուլի ազդեցության սահմանափակման և դրա միջոցով գնաճային սպասումների զսպման մեջ: Հարկաբյուջետային քաղաքականությունը ևս պետք է կարևոր դեր կատարի գնաճի զսպման հարցում. բյուջետային ծախսերը պետք է ըստ առաջնահերթության դասակարգվեն և 2008 թ. ընթացքում նախատեսվածից բարձր եկամուտները ծախսելու փոխարեն՝ տնտեսվեն: Վերջապես, ներմուծման ոլորտում մենաշնորհային դրսևորումների սահմանափակումը ևս կնպաստի գների նվազմանը:

Հարկային բարեփոխում. նոր կառավարության բարեփոխումների օրակարգը հուսադրող է

Հարկային վարչարարության գծով թերությունների վերացման նպատակով Հարկային պետական ծառայությունը (ՀՊԾ) մշակել է հարկային վարչարարության արդիականացման համապարփակ ծրագիր՝ հաշվի առնելով ԱՄՀ-ի և այլ դոնոր կազմակերպությունների կողմից նախկինում կատարված առաջարկությունները: ԱՄՀ-ն ամբողջությամբ սատարում է ծրագրում արտացոլված առաջնահերթություններին, այդ թվում՝ ՀՊԾ-ի վերակառուցմանը, հակակոռուպցիոն պայքարին, ԱԱՀ-ի վերադարձի արագացմանը, խոշոր հարկ վճարողների նկատմամբ վարչարարության ամրապնդմանը և հարկ վճարողների սպասարկման բարելավմանը, մասնավորապես փոքր ձեռնարկատերերի մասով:

Այնուամենայնիվ, բարեփոխումների կայուն ընթացքն ապահովելու և դրանց նկատմամբ վստահությունը բարձրացնելու համար կառավարությունը պետք է հարկային բարեփոխումների ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսավորում ապահովի:

ԱՄՀ-ն նաև աջակցում է *հարկային քաղաքականության գծով թերությունների* վերացմանն ուղղված կառավարության ծրագրին, որով նախատեսվում է ԱԱՀ-ի շեմի սահմանում և փոքր ձեռնարկատերերի համար հարկերի հաշվարկման և վճարման պարզեցված ընթացակարգերի սահմանում: Միևնույն ժամանակ, ելնելով ձեռնարկատիրության ոլորտում հավասար մրցակցային պայմանների ստեղծման կառավարության նպատակից, ԱՄՀ-ն դեմ է արտոնյալ հարկային ռեժիմներին (օրինակ՝ արժեթղթերի բորսայում ընկերությունների ցուցակագրման նպատակով հարկային արտոնությունների սահմանմանը, ինչպես նաև վառելիքի և ծխախոտի գծով գործող հաստատագրված վճարների համակարգին):

Կենսաթոշակային բարեփոխում. հարկաբյուջետային ծախսը և պահանջվող ժամանակը պետք է իրատեսորեն հաշվարկվեն

ԱՄՀ-ն սատարում է կենսաթոշակային համակարգի արդիականացմանն ուղղված նոր կառավարության ծրագրերին: Հաշվի առնելով ծրագրի իրականացման հետևանքով առաջացող հարկաբյուջետային ծախսերը՝ դրանք պետք է իրատեսականորեն հաշվարկվեն մրցակցող առաջնահերթությունների դիտարկմամբ: Քանի որ նոր համակարգերի և ընթացակարգերի համար ներդրումներ կպահանջվեն, անհրաժեշտ է արդյունավետ պլանավորման և իրականացման համար բավարար ժամանակ տրամադրել՝ նախքան նոր կենսաթոշակային համակարգի ներդրումը: